ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/04

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական գրանցման համար՝ 273.110.1156506),

քննելով «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 11.01.2022թ. ներկայացված (12.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/04 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ջիարջի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

« 1. 1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է «ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման հրավեր, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

2021թ-ի դեկտեմբերի 30-ին էլեկտրոնային փոստի միջոցով ստանում ենք մրցույթի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը, որով գների նվազեցման համար բանակցությունների օր և ժամ է նշանակվել 2022թ-ի հունվարի 4-ին ժամը 11:00-ին՝ մեջբերում.

Քանի որ ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ուստի կարգի համաձայն բացման նիստը կասեցվել է գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար: Բանակցությունները տեղի կունենան Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Սիսիանի բժշկական կենտրոնում 2022թ-ի հունվարի 4-ին ժամը 11:00-ին:

Մինչև նշանակված օրը և ժամը էլեկտրոնային փոստի միջոցով նոր գնային առաջարկներ են ներկայացնում միայն 3 կազմակերպություն՝

Արփիմեդ ՍՊԸ

Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ

ՋԻԱՐՋԻ ՍՊԸ

2022թ-ի հունվարի 4-ին ժամը 11:05-ին, բանակցության ավարտից հետո, գնահատող հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ 3 կազմակերպությունների նոր նվազեցրած գնային առաջարկները էլեկտրոնային փոստի միջոցով հրապարակում է մասնակիցների համար:

Այս փուլով բանակցությունները պետք է ավարտվեր, քանի որ ոչ մի մասնակից ներկա չի եղել բանակցությանը:

Սակայն, դրանից հետո, ժամը 11:42 ստանում ենք ևս մեկ էլեկտրոնային նամակ, որով բանակցության ավարտից հետո սահմանվում է բանակցության նոր վերջնաժամկետ՝ 13:00-ն /կից ներկայացնում ենք/, որի իրավունքը պատվիրատուն չուներ, իսկ ժամը 13:29-ին ուղարկում է Նատալի Ֆարմ ՍՊԸ-ի նոր գնային առաջարկը:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատանկով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միա ժա մա նա կյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մաանակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային այաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը, ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

Տվյալ դեպքում պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա), բ) և դ) կետերը:

Փաստացի, պատվիրատուն իրավունք չուներ բանակցություններից հետո սահմանել բանակցության նոր վերջնաժամկետ:

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին չեղարկել N3 արձանագրությունը և ընդունել միայն այն նվազեցված գները, որոնք ներկայացվել են մինչև բանակցության համար սահմանված ժամը՝ 2022թ.-ի հունվարի 4-ին ժամը 11:00-ն»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.01.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 14.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան Ձեր 12.01.2022թ. գրության՝ հայտնում ենք Ձեզ, որ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՍՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով մրցույթի վերաբերյալ բանակցությունները տեղի են ունեցել Սիսիանի բժշկական կենտրոնում 2022թ. հունվարի 4-ին ժամը 11-ին: Քանի որ բանակցությունները տեղի են ունեցել էլեկտրոնային եղանակով, ուստի մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկները («Արփիմեդ» ՍՊԸ, «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ) նույն պահին՝ հունվարի 4-ին ժամը 11:05-ին միաժամանակ ուղարկվել են բոլոր մասնակիցներին (կցվում է էլեկտրոնային փոստից արտատպված ֆայլը): Եվ քանի որ արձանագրության մեջ հստակ նշված չի եղել ավարտի ժամ, ուստի ժամը 11:41-ին, միաժամանակ բոլոր մասնակիցներին, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է հաղորդագրություն, որում նշված է եղել, որ բանակցության նիստը կավարտվի ժամը 13:00-ին (կցվում է էլեկտրոնային փոստից արտատպված ֆայլը), որպիսի մասնակիցներին ժամանակ տրվի վերանայել գնային առաջարկները: Բանակցության նիստի ավարտին՝ ժամը 13:00-ին «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն գնային առաջարկ է ներկայացրել և ընդունվել (կցվում է էլեկտրոնային փոստից արտատպված ֆայլը):

Քանի որ ժամը 13:00-13:30-ը եղել է ընդմիջման ժամ, իսկ բանակցության նիստն արդեն ավարտված է եղել, ուստի հետագա խնդիրներից խուսափելու համար «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ժամը 13:29-ին է ուղարկվել է բոլոր մասնակիցներին:

Ելնելով վերոգրյալից, քանի որ մասնակիցները բանակցություններին մասնակցել են էլեկտրոնային եղանակով և գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել նրանց կողմից ժամանակին ուղարկված էլեկտրոնային գնային առաջարկները, ուստի գտնում ենք, որ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. N526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա), բ) և դ) կետերը չեն խախտվել: Ստորև ներկայացվում են.

5) Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սուն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար

նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

Հաշվի առնելով վերը ներկայացվածները՝ գտնում ենք, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն չի կարող պահանջել չեղարկել N 3 արձանագրությունը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.01.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է հետևյալը. «Քանի որ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ուստի կարգի համաձայն բացման նիստը կասեցվել է գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար: Բանակցությունները տեղի կունենան Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի բժշկական կենտրոնում 2022թ.-ի հունվարի 4-ին ժամը 11:00-ին

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա մասնակիցների կողմից իջեցված գնային առաջարկների ամփոփումից հետո»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ բանակցությունները տեղի են ունեցել Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2022թ.-ի

հունվարի 4-ին ժամը 11:00-ից մինչև 13:00-ն էլեկտրոնային եղանակով: Մասնակիցների ուղարկած գնային առաջարկները տվյալ պահին ուղարկվել են բոլոր մասնակիցներին»:

4. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ամփոփելով բանակցության արդյունքները, որոշում է կայացրել համապատասխան չափաբաժիններով ընտրված մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ջիարջի» ՍՊԸ-ի 11.01.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 14.01.2022թ. գրությունը՝ կից փաստաթղթերով և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները

գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի

կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի.

Այսպես, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է հետևայլը. «Քանի որ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ուստի կարգի համաձայն բացման նիստը կասեցվել է գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար: Բանակցությունները տեղի կունենան Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի բժշկական կենտրոնում 2022թ.-ի հունվարի 4-ին ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա մասնակիցների կողմից իջեցված գնային առաջարկների ամփոփումից հետո»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ բանակցությունները տեղի են ունեցել Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2022թ.-ի հունվարի 4-ին ժամը 11:00-ից մինչև 13:00-ն էլեկտրոնային եղանակով: Մասնակիցների ուղարկած գնային առաջարկները տվյալ պահին ուղարկվել են բոլոր մասնակիցներին»:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ամփոփելով բանակցության արդյունքները, որոշում է կայացրել համապատասխան չափաբաժիններով ընտրված մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Ջիարջի» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է բանակցությունների անցկացման իրավաչափությունը, մասնավորապես՝ հայտնելով, որ

բանակցության ավարտից հետո սահմանվել է բանակցության նոր վերջնաժամկետ՝ 13:00-ն, իսկ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի նոր գնային առաջարկը ուղարկվել է ժամը 13:29-ին:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուն բողոքի քննության շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 14.01.2022թ. ուղղված գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Բանակցությունները տեղի են ունեցել էլեկտրոնային եղանակով, ուստի մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկները («Արփիմեդ» ՍՊԸ, «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ) նույն պահին՝ հունվարի 4-ին ժամը 11:05-ին միաժամանակ ուղարկվել են բոլոր մասնակիցներին: Եվ քանի որ արձանագրության մեջ հստակ նշված չի եղել ավարտի ժամ, ուստի ժամը 11:41-ին, միաժամանակ բոլոր մասնակիցներին, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է հաղորդագրություն, որում նշված է եղել, որ բանակցության նիստը կավարտվի ժամը 13:00-ին, որպիսի մասնակիցներին ժամանակ տրվի վերանայել գնային առաջարկները: Բանակցության նիստի ավարտին՝ ժամը 13:00-ին «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն գնային առաջարկ է ներկայացրել և ընդունվել»:

Քանի որ ժամը 13:00-13:30-ը եղել է ընդմիջման ժամ, իսկ բանակցության նիստն արդեն ավարտված է եղել, ուստի հետագա խնդիրներից խուսափելու համար «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ժամը 13:29-ին է ուղարկվել է բոլոր մասնակիցներին»:

Այսպիսով՝ ամփոփելով վերը նշված փաստերը և գնահատելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողություններն՝ ուղղված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցության անցկացման իրավաչափությանն, արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ ***բանակցությունները տեղի են ունեցել էլեկտրոնային եղանակով***:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից 14.01.2022թ. գրությամբ նկարագրված էլեկտրոնային եղանակով բանակցությունների վարման գործընթացը չի բխում Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետով սահմանված բանակցությունների միաժամանակյա վարման սկզբունքից, ընդ որում գտնում եմ, որ բանակցությունները պետք է կազմակերպվեն գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրված նիստի շրջանակներում և ի սկզբանե պետք է սահմանվի բանակցությունների վարման

վերջնաժամկետ և անցկացվեն այնպես, որ ապահովվի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևաբար պետք է դադարեցնել 05.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությունը և գների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա նոր բանակցություններ՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետով, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է բողոքաբերի հետևյալ պահանջին, այն է՝ ընդունել միայն այն նվազեցված գները, որոնք ներկայացվել են մինչև բանակցության համար սահմանված ժամը՝ 2022թ.-ի հունվարի 4-ին ժամը 11:00-ն, արձանագրում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բանակցությունների վարման գործընթացը կազմակերպվել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 11.01.2022թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1.Պարտավորեցնել «ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությունը:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**